

ԽՄԱՍԳՐԱԿԱՆ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ

Ո՛չ, սխալ կ'ըլլայ պնդել որ Դաշնակցութեան հիմնադիրները նոր կուսակցութիւն մը տուին հայ ժողովուրդին: Անոնք պարզապէս վերակենդանացուցին հինը, գտան այն երակը որ դարերու խորքէն, Տիգրանի, Վահանի և Արտաւազդի սրտերէն կը հոսէր Սասմայ Դա. լիթներու և Մհերներու հոգիներէն Կերս, և որը տարբեր դարերու ճնշումին տակ դաւկացած իր հոգեվարքի զարկերը կը համբէրէ Հին ու շքեղ դարերու առնական այդ երակը Դաշնակցութեան հիմնադիրները կապեցին նոր Տիգրաններու սրտերուն, որոնք կոչուեցան՝ Գեորգի, Անդրանիկ, Համազասպ, Մուրատ, ու բովանդակ հոյրը հայկական ազատամարտի շքեղանքին:

Բոլոր ազգերը իրենց ծննդեան օրերէն, միշտ ունեցած են տարբեր մը, յեղափոխական բնազդներով, սիրահար ազատութեան, ալլասէր ու ասպետական հոգիով զեղուն: Դարերու ընթացքին այդ տարբեր կամ գերդաստաններու շարանով մըն է յիշուած, կամ կուսակցական խմբաւորումով և կամ անհատական նախաձեռնութեան ուղիով: Փոխուած են անունները, յաճախ աշխարհայեցողները, բայց նոյնը մնացած հոգին: Առ ամէն անգամ երբ ցեղը պէտքն է ունեցած այդ ուժին, ան հրապարակ եկած է հին պատմական առաքելութիւն մը նոր անունի տակ շարունակելու համար: Ծարիններ երբեմն եղած են չարաքաստիկ, պայմաններ անաւոր, ցեղը չէ կարողացած շուտով երեւան բերել այդ ուժը, բայց ճակատագրական մէկ վայրկեանին անիկա յայտնուած է յանկարծակի ու առաջնորդած ժողովուրդը պայքարի նոր հանգրուաններու:

Մեր դարաւոր պատմութեան մէջ, այդ ուժը երբեմն կոչուած է Բազրատունեան, երբեմն Արշակունեան, Մամիկոնեան, ու այլ քաղմաթիւ տոհմական անուններով, իսկ մօտ կէս դարէ առջին ան կը կոչուի Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն: Վերջին աւանդապահը Հայ ցեղի մարտական հոգիին, ռազմական կորովին ու ցեղային առաքելին բնազդներուն:

Ժառանգորդը սքանչելի ցեղի մը հոգեկան փլատակներուն, անոր աւերուած ու երկցս խոշտանգուած հայրենիքին, Դաշնակցութեան վիճակուեցան Հերթուեցան աշխատանք տանել Հայութիւնը արժանի դարձնելու համար իր անցեալին: Ոչինչ էր քաղաքական գերութիւնը, բարձրագոյն հոգեկան այն խաթարումին որը կ'սպառնար իսպառ անհետացնելու Հայկեան ցեղը: Այդ աղէտը սրբած տարած էր Ռուսմանիոյ, Հեռատանի ու այլ երկիրներու հարիւր հազարաւոր Հայութիւնը: Թրջական գերիշխանութեան տակ անվերջ կեղծութիւններու և անարտունջ համակերպութեան շնորհիւ՝ բարձրը, տեղ տեղ լեզուն, անգամ ցեղը կը գտնուէր այլասերման վտանգին առջեւ: Ռուսահայաստանի մէջ ռուս գերակշիռ մշակոյթը կ'սպառնար ռուսացնել ցեղը, տակաւ թափանցելով ընտանիքներէ, դպրոցներէ ներս, օր մը հայութեան այդ հատուածն ալ հասցնելու համար Պետարապոյտ իր ցեղակիցներու բողոքին: Մտաւորականութիւն մը, այս կամ այն իշխանութեան տակ, որ ցեղային իր հանձնար իսպառ կը դնէր օտար ժողովուրդներու, բայց երբեք իր ժողովուրդին: Թիւրքը կը ստիպէր արիւն անասա՛ւ: Հիւրմասու և հոգին սուսաւ: Ռուսը մեկ կը բնորոշէր գրեթե՛ շրջանը՝ վարկուտ ես, դուն ստրուկ ես, դուն հայ ես: Լեռնայան կ'ընդհանրէր մեզ իբր լացող, սպիտակ ու անվերջ կոտորուող ժողովուրդ մը: Հայ մարդը ընկճուած քաղաքական եւ հոգեկան գերութեան տակ, իր ծնունդն ու բարձր կանխիկը ամէն օր:

Այս անօրինակ պայմաններու մէջ էր որ հրապարակ եկաւ Դաշնակցութիւնը: Հայ ցեղի հին արի երակը լեցնելու համար կրկին հսկանքու արիւնով: Ու բոլոր հորիզոններու տակ ուր հայ սիրտ մը կը արոփէր, կարճ ժամանակէն ընթացքին հասաւ ցեղի վերագործման ալիքը: Կրտսերական տխր ու վախը, անցեալը ոգեկոչող երգերու վայրկեանական հայրենասիրութիւնը, տեղի տուին յեղափոխական գործին առջեւ, որ կենդանի թափով իր պատուհասող քաղաքներ կը կարեց՝ սանձանի այս ու այն կողմ, յստրուկ հայէն մարտնչող ու սզատաննի ժողովուրդը մը առաջացնելու համար:

Հատորներ են պէտք պատմելու համար գործը՝ որ կ'ստորեկ Դաշնակցութիւնը իր քառասուններկու տարիներու փոթորկալից կ'անցրէ ընթացքին, հարեւանցի սկիզբով մը պիտի խաթարէր այդ պատմութեան շքեղութիւնը: Վերապրող Հայութիւնը՝ ապրած ու աշխատած Դաշնակցութեան հետ ու անոր մէջ, գիտէ անոր գործին բովանդակ արժէքը, անոր տուած հերոսներուն սքանչելի նկարագիրը, գիտէ անգլուխան այն կապը՝ որ կ'ապուած պահեց Դաշնակցութիւնը հայ ժողովուրդին փոխառութեան ու տառապանքի բոլոր վարկեաններուն, պայքարի ու արիւնի բոլոր ճակատներուն վրայ:

Ու այս օր տարիներ յետոյ, աշխարհը ցնցող անօրինակ դէպքերէն վերջ, մեր ժողովուրդին անցուցած փոթորկալից փուլերէն յետոյ, անհամար զոհերու, անթիւ կախաղաններու, զնտաններու խորը մահացած աստուածատիպ հերոսներու շքանշան վերջ, ինչպարտ ու անասան, զոհուելու նոյն պատրաստակամութեամբ, նոյն կարգապահ հոգիով, նոյն զեղուն սրտով դէպի Հայ ժողովուրդը, կ'ապրէ Հայ Յեղափոխականութիւնը, իրեն վիճակուած պատմական առաքելութիւնը իր լրումին հասցնելու համար:



ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՅԱԿԱՆ ՌԱՆՉՎԻՐԱՆԵՐԸ ԽՈՒՄԵԱՆ (Կեղոնը), ԱՐՈՎԷԱՆ, ԲԱՔԵՒ, ՆԱԼԲԱՆԻԵԱՆ, ԲԱՄԱՌԻ ԳԱԹԻՊԱ



Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԸ ԳՐԻՍՏԱՓՈՐ, ԶԱԽԱՐԵԱՆ ԵՒ ՌՈՍՏՈՄ

ՅԵՂԱՓՈՒՅԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՅԱՐԱՏԵՒԻ ԿՈՌԻԻ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Սղգերու պատմութիւնը հերոսներու պատմութիւնն է, ըսած է անձան Գարալի: Անձնուրաց համարձակ և արի փոքրամասնութիւններն են որ կը ղեկավարեն ժողովուրդներու կեանքը, կը քանջեն բազմութիւնները իրենց ետեւն եւ կը դարձնեն ուրիշ խօսքով պատմութիւնը:

Հասարակագիտական այս ճշմարտութիւնը, որու սպոյնը յերթ մենք կը գտնենք ժամանակակից ազգերու յանապարհայ իրականութեան մէջ, գուցէ ոչ մէկ տեղ այնքան արդարացուած չէ, որչափ հայոց ժողովուրդի նորագոյն պատմութեան մէջ:

Հայ յեղափոխական շարժումն է խրթանը, աւելին, ամբողջական պատմութիւն մեր վերջին յիսնամեայ կեանքին: Յեղափոխական բուռ մը անձեր, վճապական և քաղաքակրթ, հիմը դրին ասկէ քառասուններկու տարիներ առաջ Հ. Յ. Կոնստանտնուպոլսի, որ այլևս չարժիչ ուժը դարձաւ հայոց հասարակական կեանքին և կը մնայ բեւեռ՝ հայ ազգային մտաւոր-քաղաքական-մարտական ճիգերուն: Առանց յեղափոխական փոքրամասնութեան, Կոնստանտնուպոլսի, անըմբռնի է այն յեղակարծ և փոթորկալից շրջանը որ սպրեցաւ հայութիւնը հաւաքականացնելու:

Դաշնակցութիւնը՝ իր հերոսներու փառանքով գունաւորեց հայ նորագոյն պատմութիւնը: Ան խթանեց մաքուր հայ քաղաքական վերածնութեան եւ մտաւորական շնչեց բնակչութեան արիւնոտ ձեռքերով հաստատուած քաղաքական սանձանները՝ մեր ժողովուրդի ամբողջութեան վրայէն: Ռուսահայ, Տաճարահայ, Պարսկահայ բաւերը պարզ հոմանիշները դարձան սարբեր արքայութեան յեղափոխական տակ հեծող հայկական բեկորներուն, բոլորն ալ ճիւղերը նոյն հասարակ կողմին, ամբողջական եւ միտցող հայութեան:

Իբրևս Թմրի լեզու ընկզմանով հայութեան՝ հայ յեղափոխական փոքրամասնութիւնը վարարեց ազատութեան հուրով և արիւնոտ պայքարի առաջնորդեց քաղաքի ֆէլաջայական խումբեր, որոնց շքեղեքը ստուարացան այնպիսի շփոթով, որ դարձան օր մը քանակը Հայաստանի հանրապետութեան:

Դաշնակցութեան խոյան շեփոթին պատասխանեցին անձան կորիւնները հայ յեղափոխութեան և անձնատուր անական զոհերութեան և անկուր իրիզխաութեան անսանձ մրրիկին՝ հայ ազատագրութեան շարժման ընձայեցին ներսկան Բանկ Օրոսմեր, վրիժառու Խանսօր, Սրբազի մանփոթը և Ալաթսամբ Սառնը: Դէպքեր, որոնցով շքուստ չէ աւելի բարեբախտ ազգերու պատմութիւնը: Հայ զորուածային շարժումները — լինապատասխանութեան կախիկները բրախայասանի եւ կովկասի մեջ, եկեղեցական կալուածներու դեմ իրիզխաութեան և վերջապէս կամաւորական օստմուր, որ պէտք է յանգէր հայկական ազատագրութեան — արդիւնքն են նոյն յեղափոխական փոքրամասնութեան զեկավարութեան:

Հայ յեղափոխական անզուգական առաջնորդը, Բերսապոս Միլայեան, յիդ փոխական պայքարի մեծ տեսաբանը, 96-98 շրջանցի ղեկավարը յետոյ, երբ հայ հասարակական փոքր կը տարբերէր քիբիւսի լաւատեսութեան և ճակատագրապատ լուսնոտութեան և իր բուռ միջև, գիտէ յեղափոխական փոքրամասնութեան դերին ու ժողովուրդին վիճակուած դատն հիասթափութիւններուն, կը պատգամէր յարաբե կառնեսութիւնը: Յեղափոխական պայքարի յաղթանակը պայմանաւորուած է կուրի յարատուութեամբ: Փոքրամասնութիւնը, իր կոչումին և դերին զիտակից կազմակերպութիւնը կը յաստատուէր ղեկավարել ժողովուրդը, շարունակելով պայքարը, առանց վնասելու, անեղ և հետեւողական: Ամէն վնասութիւն և շեղում միայն կը հետաքննէ վերջնականապէս, այլև առ ոչինչ կը դարձնէ մինչ այդ կատարուած նուաճումները:





